

128

HAI ARI

ՀԱՅ ԱՐԻ

ՕՐԿԱՆ ԳՐԱՆԱԽՅԻ ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ
ORGANE DES SCOUTS ARMÉNIENS EN FRANCE

Բ. ՏԱՐԻ ԹԻԻ
2-e ANNÉE No.

4-5

1931

* ՅՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ *
* JANVIER-FEVRIER *

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ Գ. Մեծատուրեան
 ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՈՒՂԵՐՁ . . . Վերի Լեհն Մեհաւորը
 Ո՞ՒՐ Է ՀԱՅ ՍԿԱՌԻՏՈՒԹԻՒՆԸ Սկաւաւ
 ԲԱՆԳԱՐ-ԼՈԳԵՐԸ Ա. Բեյլա
 ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ Արմ. Զամալեան
 ԳԱՒԱՋԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ . . . Սուրբն Նալպանտեան
 ԴԵԿՏ. 13 Ի ՀԱՆԳԷՍԸ Հայ Արի

Սինէ Հայ Արի, Միութեան կեանքը

Գինն է 2.50 ֆրանկ

2001

7 / OCT 2010

2013

HAÏ ARI

REVUE MENSUELLE

Organe de l'association des Scouts Arméniens

Reconnue par le Bureau International de Scoutisme

Directeur: KOURKÈNE MEDZADOURIAN



ՕՐԿԱՆ ՅՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ

Կը հրատարակուի ամիսը մէկ անգամ խմբագրական մարմնի մը կողմէ

Յօդուած և դրամական առաքումներ ընել հետեւեալ հասցէին՝

ԳՈՒՐԳԷՆ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

3, Rue Gustave Tricard


BAGNEUX (SEINE) FRANCE

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ֆրանսա, Սուրիա և Պալմաներ տարեկան 25 ֆրանկ

Ուրիշի երկիրներ ,, 2 տոլար

Հատը ձեռքէ կը ծախուի 2.50 ֆրանկ



Բ. ՏԱՐԻ
ԹԻԻ
4-5

ՊԵՏԻՆ ԽՕՄԻԸ

ԱՄՄԱԿԻՐ ՖԲԱՆՍԱՅԻ ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ

ՅՈՒՆՎԱՐ
ՓԵՏՐՎԱՐ
1931

Ե Ն Ա Յ Ի Դ Ա Ս Ը

Գեկտեմբեր 13 ի երեկոյրին արդիւնքը եղաւ մեր սպասածէն աւելի: Փարիզի նորագոյն և ամենագեղեցիկ սրահը լեցուած ծնողներու և բարեկամներու խումն բազմութեամբ մը, անկարագրելի խանդավառութիւնը և այդքան ընտրուած հասարակութիւնը մեծ նշանակութիւն ունեցող ցոյց մը եղան ի պատիւ մեր Միութեան:

ԿԱԶՄԱՆԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Արդիւնքը վարձատրութիւնը եղաւ մեր տղոց աշխատանքին: Սրահը վարձուած էր Սեպտեմբեր 15 ին և հանդէսին բրօքականոր սկսած Հոկտեմբերէն սկսեալ: Հակառակ նոյեմբերի եր-

րորդ շաբաուան յայտարարուած ուրիշ երեկոյրի մը մեր հանդէսը ստացաւ իր արժանի վարձատրութիւնը: Ուրախ ենք այս արդար արդիւնքին համար, այլապէս վրդովեցուցիչ պիտի ըլլար այս պարագան:

ՊՐՕՊԱԿԱՆՏԸ

Պրօպականոր կը պարտինք ոչ միայն մեր սկսուողներուն այլ Միութեան Հովանաւոր Մարմնին, մեր ծրնողներուն և Միութեան ազնիւ բարեկամներուն, որոնք այնքան ազնուօրէն նպաստեցին հանդէսի յաջողութեան՝ ըլլայ տոմսակներու ցրումը, ըլլայ հանդէսին բերանացի պրօպա-

1584

7630-Ա3

կանոնը լրացուցին մամուլին օժանդակութեան պակասը:

Անգամ մը ևս տեսանք թէ մեզ հետ է հայ ժողովուրդին համարկրանքը:

ՀԱՆԴԵՍՐ

ԻՍԿ ԱՐԴԻՒՆՔԸ...

Տյոդ հանդէսին, գերագանցեց նախորդները, ինչպէս խոստացած էինք: Ոչ միայն աւելի ժողովուրդ կար, այլ յայտագիրը և մթնոլորտը լաւագոյն յառաջդիմութեան մէջ էին: Սկաւտները իրենց իսկ թէ բռով և թէ յառաջդիմութեամբ գերագանցեցին նախորդ տարուանը ու հասարակութիւնը գոհ մնաց, ինչպէս նաև մեր հիւրերը: Ուրեմն արդիւնք մը ևս:

Բարոյապէս ահա փաստ մը ևս թէ ինչ կ'արժեն մեր տղաքը: Նիւթապէս շատ գոհացուցիչ արդիւնք մը և իրր եզրակացութիւն կրկնենք Հանրի Մարքիի խօսքերը. — «Սյոդ երեկոյցի ընթացքին տեսանք թէ հայ սկաւտութիւնը յաջողած է ձեր մէջ: Նկատեցինք թէ որքան արժէքաւոր է հայ նոր սերունդը և որքան կապուած է անոր Փարիզի հայութիւնը: Փառք հայ պատանիին»...:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպէս ըսինք, սրահը լեցուն էր: Նախ ներկայ էին Փարիզի օտար սկաւտական խումբերու ներկայացուցիչները, մեր Արիւնջները, հանդէսի նախագահ Հանրի Մարքիին, Մարք Սանիէն, մեր Հովանաւորող Մարմինը իր ամբողջական կազմով: Ներկայ էր նաև Փարիզահայ քաղաքական և հասարակական գործիչներու դասակարգը, կատարեալ բռով, ինչ որ մեզ հպարտացուց և յուզեց...: Եթէ աւելցնենք մեր ծնողները, բարեկամները և հայրենակիցներու բազմութիւնը, կ'ունենանք, ամբողջութիւն մը որ գաղութահայութեան ցուցումն է:

Վերջացնելէ առաջ անգամ մը ևս մեր երախտագիտութիւնը յայտնենք ամէն անոնց որոնք մեզի հետ եղան թէ մեր ծանր աշխատանքի օրերուն և թէ այդ օրը: Սալ Ենայի դասը փառաւոր էր, և շատերը կրնան օգտուիլ անկէ:

«Շնորհաւոր Նոր Տարի».

Բոլոր սկաւտ եղբայրներու շատ երջանիկ տարի մը կը մտայնեմ, և ամբողջ սրտովս կը ցանկամ իրենց յաջողութիւն և ամէն տեսակի յառաջդիմութիւն: Թող 1931 ի հետքերը զիրենք առաջնորդեն դէպի մեծ նպատակը:

ԳՈՒՐԳԷՆ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ



« ՀԱՅ ԱՐԻ » Ն ԿԸ ՇՆՈՐՀԱՌՈՐԷ
ՆՈՐ ՏԱՐԻՆ ԻՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԻՅՆԵՐՈՒՆ ԵՒ ԸՆԹԵՐՅՈՂ
ՍԻՐԵԼԻ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ



5487-59



Նոր Տարուայ ուղերձ

Այսօր խաղաղութիւն կը տիրէ խրհիքիս շուրջը: Չորս կողմը սպիտակ է: Երկնքէն կը ձիւնէ հանդարտ ու մեղմիկ: Նորութեան, անսովորի զգացում մը կը սաւառնի մթնոլորտին մէջ: Կրգգամ որ հոգւոյս խորը փոփոխութիւն մը կը կատարուի:

Վաղը Նոր Տարի է...

Մէկ տարուայ կեանքի, պատահումներու ու դէպքերու ժխորէն կը ջանամ դուրս հանել եզրակացութիւն մը, նշտել, ուրուագծել մեր ջանքերու ու նպատակի իրագործուած մասերը:

Տարեվերջի հաշուեյարդարիպահն է այս ու կրգգամ իր վստահութիւնը: Ակնարկս ծուլօրէն ձիւնաքաթախ պատուհանէն դուրս ձգած, աննպատակ կը դիտեմ ձիւնապատ հեռաւորութիւնները ու միտքս կը բռնի դէպի ետ:

Արդար իսկաւ մը ունեցանք այս վերջին տարիները. հայ անունին պատիւ բերել սկաւտական մարզին մէջ. իսկաւ մըն է այս, որու իրաւունք ունի ձգտելու ամէն գիտակից պատանի: Մեզմէ առաջ շատեր ունեցած են այդ ձգտումը կամ ունեցած են այդ փափաքը: Եւ, Աստուծոյ օգնութեամբ կրցանք որոշ չափով իրագործել այդ բանը:

Մերը չէ յանցանքը եթէ այդ ուղղութեամբ աշխատելով ու այս արդիւնքին հասնել ջանալով, հարկադրուեցանք տեսակ մը պայքարի ձեւ տալ մեր նիգերուն: Բոլորովին մեր կամէն անկախ եղաւ այդ բանը: Հեռու է մեզմէ այդօրինակ փափաք մը: Ըրինք ինչ որ պէտք է ընէինք, այսօր հանդարտ է մեր խիղերը:

Մեզ չի հասկցան ոմանք: Ուրիշներ կարելի է շուրջեցին հասկրնալ: Ստիպուեցանք գործին պինդ փարիլ, քիչ մը շեշտել մեր ընթացքը, յանախ խրախոյսի խօսքեր ուղղել մեր տղոց, թէեւ աւելորդ էր այդ բանը: Մեզի համար ամենալաւ խրախոյսն էր լաւ գործ մը կատարելու գիտակցութիւնը:

Հակակրութիւններ ստեղծուեցան այս առթիւ, գիտեմ: Ա-

նոնք բոլորն ալ արդիւնք են եթէ չըսեմ դժկամակութեան, անբարեհաճութեան, գոնէ՛ անհասկացողութեան:

Ազատ, նպաստաւոր պայմաններ ուզեցինք, կարենալ վայելելու համար դասական սկաւտիզմի արդիւնքները: Եւ այլապէս կարելի չէր...:

Այժմ լաւ համբու վրայ ընթանանք. մեր խոստումին ու դաւանանքին համբուն վրայ: ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ հայ անունին ու գաղափարին համար աշխատելու: Ուրիշ կերպ կարելի չէ մըտածել հայ սկաւտներուն համար:

Գիտակից մեր ժողովուրդին ներկայ դրութեան ու պէտքերուն ու վստահ մեր վաղուայ նակատագրին, սկաւտները պիտի գիտնան իրենց պարտականութիւնը կատարել մի՛շտ:

Եւ եթէ պահ մը անբարեացակամները իրենց նիգէն տարուած փորձեցին աննպաստ լոյսի մը մէջ դնել մեր նոր սկսած շարժումը, մենք մոռցած ենք այդ: Հաւաքականութեան ու համերաշխութեան գաղափարը, մեզ բոլորիս կը թելադրէ միայն բարեկամներ ունենալ հայ ժողովուրդին մէջ:

Հայ Ոյժին մէկ մասնիկն ենք եւ կ'ուզենք որ այդ ոյժը անխախտ մնայ: Կը ցանկանք որ այդ Ոյժին ամէ՛ն մէկ մասնիկը, անհատ թէ կազմակերպութիւն, իր շրջանակին մէջ իր դերը կատարէ:

Ա՛յն ժամանակ Մասիսի ալեհեր նակատը պիտի բարձրանայ հպարտ:


* * * *

Ու այժմ, պահ մը լուռ խորհելէ վերջ, կը վերջացնեմ ուղերձս, աշխարհի բոլոր հայ սկաւտ եղբայրներուս մաղթելով բեղմնաւոր սկաւտական տարի մը, բարութեամբ, անճնուիրութեամբ, կորովով, ժպիտով ու եղբայրութեամբ բոլորի՛ն հանդէպ:

Շնորհաւոր Նոր Տարի:

Պուրբէշ

ՎԵՐԻ ԼԻՃԵՐՈՒՆ ՄԵՆԱԻՈՐԸ



ՍԿԱՌԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՈՒՐ Է ՀԱՅ ՍԿԱՌԻՏՈՒԹԻՒՆԸ

Մեր մէջ շատեր դեռ, ըլլան մտաւորական թէ վաճառական, կ'անդրտանան, դժբախտաբար, սկաւտութեան էութիւնը՝ իր խորքին մէջ, իսկ սմանք՝ չըսելու ամար մեծագոյն մասը — նոյնիսկ գոյութիւնը:

Սկաւտութիւնը, մեր մէջ, յաճախ շփոթեալ է մարմնակրթութեան հետ, կարծուելով թերեւ, թէ սկաւտը շատ շատ՝ «համազգեստաւոր մարդիկ» մըն է: Եւ մինչ գրեթէ ամբողջ «քաղաքակիրթ» աշխարհը ճանչցած ու գնահատած է Սկաւտութիւնը՝ իբրև ներկայ դարուս մանկավարժական լաւագոյն դրութիւնը, մենք, սակաւին, ըլլա՛յ «հասարակ» ժողովուրդէն թէ «գարգացած», ու նոյնիսկ ազգ. իշխանութիւններ՝ որո՛նք առաւելապէս պարտէին հետաքրքրուել անով, ի՞նչ յուսախարութիւն — արհամարհանքով կը քաջախրեն ! Հայ Սկաւտութիւնը:

Եւ քանի որ ընդունուած ճշմարտութիւն մ'է թէ «ամէն արդիւնք իր պատճառն ունի», պէտք է ընդունինք նաեւ թէ Հայ Սկաւտութեան ներկայ — խոստովանինք անկեղծօրէն — անհասանելի վիճակն ալ ի՛րն ունի: Որով, եթէ իւրացնենք ու գործադրենք «Ջրնջկ պատճառը, արդիւնքն ինքնին կը ջնջուի» գեղեցիկ առածը, վստա՛հ եմ թէ անխուսափելիօրէն կը հասնինք մեր խաչալի իրականացման: Բայց՝ ամէ՛ն բանէ առաջ պէտք է անկեղծ ըլլալ մեր ալքալիսով կարելի կ'ըլլայ բո՛ւն վերջը ճանչնալը:

Ի՞նչ է մեր «հիւանդութիւն»ը:

Տեսնե՛նք: Նախ, երկրէ-երկիր, տարրեր են մարդիկը, միջավայրը, քաղաքակրթութեան աստիճանները. որով և հաւանաբար տարրեր՝ ախտերը: Ուրեմն, ամէն երկիր ի՛ր «պատճառ»ներն ունի,

սակայն և կա՛ն մի քանի ընդհանուր նշաններ, որոնք գրեթէ նո՛յնն են ամէ՛ն միջավայրի մէջ ալ:

Ըստ իս, հայ սկաւտութեան տկարութեան պատճառները չորս են գրեթէ խաւորաբար: Պատճառներ՝ որոնք քի՛չ մը գիտակից ճիղով, վստա՛հ եմ թէ կը չքանան:

Ահա՛ ինչ որ համոզուած եմ թէ մեր տկարութեան պատճառ են.

ա) ԳԻՏԱԿԻՑ ՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ՍԿԱՌԻՏ-ՊԵՏԵՐՈՒ ՊԱԿԱՍ. — Ամէն բանէ առաջ, կրկնեմ, պէտք է անկեղծ ըլլալ ու չխաբել ինքզինքնիս: Հայ Սկաւտութիւնը, գրեթէ ամէն տեղ, գուրկ է սկաւտութիւնը իր խորքին մէջ ճանչցող, անոր գաղափարը իւրացուցած ու յարատեւօրէն անոր իրականացումին նուիրուած առաջնորդներէ, կամ «պետ»երէ: Առանց ուրանալու մի քանի առաջնորդ-սկաւտներու գոյութիւնը, չենք կրնար ըսել թէ Հայ Սկաւտութիւնը սենի՛ հարկ եղած ուսուցիչները: Մեծ է գաղափարը ու անոր գծած ճրագիրը, ու նաև՝ մե՛ծ է անոնց տրամադրուելիք միջոցներու սահմանը: Զոհողութիւններ կը պահանջէ ան՝ ամէն բանէ առաջ: Հայ Սկաւտութեան ներկան աւելի՛ վայելուն կ'ըլլար այսօր, և ապագան՝ աւելի՛ յուսալից, եթէ անոր գէ՛թ ընդհ. հսկողութիւնն ու ղեկավարութիւնը ստանձնած ըլլային սկաւտ «սկաւտ»ներ — Արտատո՞ց է արդեօք այս բացատրութիւնս...: Ամէն պարագայի, կը կարծեմ թէ ամենաճիշդն ալ է, — փոխանակ այս բեռը նետելու անչափահասներու — ամէն կերպով — սուսին: Սկաւտութիւնը մանկավարժական նորագոյն մէթոտն է, կարծուածէն շատ աւելի բարդ ծալքերով: Անոր գործադրութեան լծուողներ՝ պէտք է

ըլլան, ամէն բանէ առաջ, հոգեբան ուսուցիչներ, զինուորականի պոպ- պատեայ կամքով, բայց և կրօնաւորի մը հեղութեամբ ու հաւատքով: Որովհետեւ, վերջապէս ժամանցի համար չէ այս կազմակերպութիւնը, ո՛չ ալ մարմնակրթութեան համար:

Անդգիտայ թէ Ամերիկայի մէջ լմբոնելով սկաուտութեան կարեւորութիւնը, հիմնած են մինչև իսկ սկաուտական վարժարաններ և ուսուցչանոցներ: Ու բնական է թէ այդ սկաուտուսուցիչները գիտեն թէ ի՞նչ բանի կը պատրաստին իրենց յանձնուած մասազ սերունդը:

Բարբոզին հակադասներ՝ մե՛ր մէջ: Հայ սկաուտ-պետը, լաւագոյն պարագային, նախկին զինուորական սպայ մը կամ կամաւոր զինուոր մը եղած են: Ծառ քիչ են պատանեկութեան ի վեր գտնէ սկաուտական շարքերու մէջ մեծցած «խմբապետ»ներ: Ծառ անգամ ալ վարժարանի մը մարմնամարզի ուսուցիչը դարձած է... սկաուտ-պետ: Ու նաև պատահած է որ լաւ մարզիկ մը արժանի նկատուի սկաուտութիւն ղեկավարելու, որովհետեւ... գեղեցիկ մարմնի մը հետ կը սեփականէ բամբ ձայն մը:

բ) ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԶԱՆՅԻ ՄԸ ԶԳՈՅՈՒԹԻԻՆԸ. — Եւ որպէսզի Հայ Ժողովուրդը զխառնակ սկաուտութեան ազգօգուտ (ե՛ւ մարդօգուտ) իտակալին հանդէպ ի՛ր ունեցած պարտականութեան, բնական է թէ պէտք է քննարկէ ըլլայ գայն իր խորքին մէջ: Իսկ ի՞նչ գիտէ Հայ Ժողովուրդը — թողո՛ւնք «հասարակ» կոչուած մասը, ի՞նչ գիտէ նաև Հայ «ինտելիկէնտ»ը... — սկաուտութեան մասին — մեր խօսքը անշուշտ հաւաքականութեան մասին է, և ո՛չ զխաւոր անհատներու: — Հանդարտ խղճով կրբնանք վստահօրէն պատասխանել. ոչ ի՛նչ: Ու մեղաւոր չէ՛ անիկա այդ տրգիտութեան համար: Այդ մեղքը կը ծանրանայ, մասամբ ալ մեր, սկաուտ-

ներուս վրայ, կամ՝ մեր կազմակերպութեանց վարիչներուն: Պէտք եղածին պէս կրցա՞ծ ենք ծանօթացնել մենք գմեղ և մեր բարձր իտակը: Դժբախտաբար՝ ո՛չ: Մինչ օտար պղբու մէջ, ու մանաւանդ՝ Անդգիտ, Ամերիկա և Զուիցերիա սրտցուած են սկաուտական բազմազան հրատարակութիւններով, մինչ Անդգիտայ մէջ մեր օրաթերթերէն աւելի սկաուտական հանդէսներ կը հրատարակուին՝ շատ անգամ միլիոնէն աւելի քիրաժներով, մեր մէջ, ամենէն աւելի «քչուած» թերթը երկու հազարը չանցնիր: Հոն, նոյնպէս, գոյութիւն ունին գուտ սկաուտական դրասուներ: Իսկ քանի՞ ըսկաուտութեան նուիրուած գրքոյկ — ստուարահատոր գիրքերու խօսքն իսկ ընել խելացութիւն չեմ համարեր ասայժմ... — ունինք մենք՝ ցարզ հրատարակուած: Կա՞ն գուտ սկաուտական գտնէ տասնեակ մը թերթիկներ: «ՀԱՅ ԱՐԻ»ն գուրգուրալի ձեռնարկ մըն է, իրրև սկզբնաւորութիւն մը գէպի կատարեալ սկաուտական գորաւոր մամուլ մը: Ան իր պատուոյ տեղը պիտի գրաւէ անշուշտ, եթէ աննկուն կերպով շարունակէ իր ուղին ու մանաւանդ՝ եթէ աւելի՛ նուիրէ իր էջերը սկաուտական դազափարին ու քէֆնիքին:

Բա՛յց այդ չբաւեր մերինն նման ընդարձակ ու խոսքան դաշտ մը առանձինն մշակելու: ՄԱՄՈՒԼԻ, ազա՛տ մամուլ կ'ուզէ Հայ Սկաուտութիւնը՝ ինք գինքը գորղացնելու, ճանչցնելու և ընդարձակելու համար: Մեր սկաուտ-վարիչները կը խորհնայ այդ մասին:

գ. ՀԱՅ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԸՆԳՆ. ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԵԱՆ, սկաուտական միակ կեդրոնի մը չգոյութիւնը. — Ա՛յս ալ «նեղքին ցաւ» մըն է, որ թերևս գիրաւ բուժուէր գորաւոր մամուլի մը տայիք ներշնչումովը: Հոս ալ մեծ պարտականութիւն կը ծանրանայ «Հայ Արի»ին վրայ:

Բացի Հայաստանէն, — ուրտեղի

«Հայ» սկաուտական կեանքի մասին գրեթէ ոչինչ գիտենք — աշխարհիս չորս ծայրերուն ցրուած Հայ նոր սերունդը ծնունդ առած է սկաուտական կազմակերպութիւններու, որոնք կը գործեն գրեթէ իրարմէ ըստրովին անկատարի և Ամերիկայի մէջ. իսկ ասոնցմէ դուրս՝ կան նաև Հ. Մ. (այսօր անուանով միայն) Ընդհ. Միութեան ցիր ու ցան «մասնաճիւղ»երունը: Ինչո՞ւ «Հայ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԸՆԳՆ. ԵՂԲԱՅՐԱԿԿՈՒԹԻՒՆ» մը չունենանք՝ — Հ. Մ. Բ. Մ. »ի դերը չենք ուրանար. բայց կը խորհնք թէ ան աւելի՛ օգտակար ծառայութիւն մը կատարած կ'ըլլայ սահմանափակելով իր գործունէութիւնը գուտ մարմնակրթական դաշտին վերայ: Ծա՞տ դժուար է արդեօք: Թերևս. բայց հաւանաբար զլիաւոր «դժուարութիւն»ը կը կայանայ կուսակցական-դաւանական, անձնական թէ խմբական «չաս»երու ոտնակոխումին մէջ: Բաներ՝ որոնք ընդմիջապէս է չբանան սկաուտական վսեմ Ծուշանին առջև:

Պէտք ն, վերջապէս, համոզուել թէ բազում կեդրոններով չըջանակը, անիւր չի քալեր, ու կը նմանի բազմազլխեան հրէչի մը: Արդէն մէ՛կ է ամենուս ալ նպատակը. ի՞նչ պատճառ կայ որ մէ՛կ չըլլայ նաև ամենուս ծրագրերը, մէթոտը և զեկը:

դ) ԱԶԳ. ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՄԸՏԱԻՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ. —

Գազանի չէ որ հայ երիտասարդ մէն կազմակերպութիւն — սկաուտութիւն, որոս, գրական միութիւններ, հայն. — Ընդհանրապէս արհամարհուած են մեր « ճեր » սերունդէն: «Ընդհանրապէս» ըսինք, անոր համար որ երբեմն կը պատահի որ այդ կազմակերպութիւնները, հոս-հոն, «հասանաւորութիւն» այս կամ այն կուտակ-

յութենէն. բան մը՝ որ աւելի աղիտաւոր է քան չունենալ այդ «հովանաւորութիւն»ը: Մեր կուսակցութիւնները անշուշտ կ'օգտուին ասկից. ու փոխադարձաբար՝ նաև «հովանաւորութիւն» կազմակերպութիւնները, բայց կը ՏՈՒԺԷ, անկասկած, այդ կազմակերպութեանց բուն իսկ նպատակը: Մինչդեռ, անկեղծ հայրենասիրութիւնը կը պարտադրէ հոռու մնալ ա՛յդ կարգի «հովանաւորութիւն»ներէ:

Սխալ չհասկցուինք: Հովանաւորութիւն մը ԱՆ ՀՐԱԺԵՇՏ է ո՛ւրէ կազմակերպութեան մը. բայց այդ հովանին պիտի ըլլայ բացարձակապէս անկախ՝ ո՛ւրէ ալ կազմակերպութեան: Միայն ու միայն Ազգ. Իշխանութիւններն են որ — եթէ կուսակցական մամուլի տակ չեն ճնշուած — կրնան ու պէտք են հովանաւորել այդ կազմակերպութիւնները. ու մանաւանդ՝ ՍԿԱՈՒՏՈՒԹԻՒՆԸ: Որովհետեւ այս կազմակերպութեան նպատակը ո՛չ թէ հաճոյք և ժամանց պատրաստել է իր անդամներուն, այլ՝ նկարագրելը կերտել, մարդկային դիմագի՛ծը ճշդել անոնց: Ուրեմն, զպրօցի կողքին — չենք ըսեր անկից առաջ, կամ վերջը — մեր Ազգ. Իշխանութիւնները պարտին իրենք իսկ ստեղծել սկաուտական խումբեր: Եւ շատ արդիւնաւոր կ'ըլլայ եթէ զպրօցէն ներս սկսին անոր: Սկաուտ-աշակերտ մը մեծապէս պիտի տարբերէ հասարակ աշարկերունէն:

Բայց որո՞ւ կը խօսինք...: Մեր «մեծ»երը չեն իսկ ուզեր լսել՝ այս մասին: Բան մը՝ որ մենք կը վերագրենք իրենց տղխութեան: Ինչո՞ւ համար է որ Եւրոպայի թէ Ամերիկայի շատ մը նոյնիսկ երկրորդական վարժարաններու տեսուչներ իրենց զպրօցական ծրագրին կցած են նաև սկաուտականը: Աւելի՞ տգէտ ըլլաւնուն արդեօք...: Բայց թողունք զըպրօցի տեսուչները: Մինչև իսկ Մեծն Բրիտանիոյ վեհապետը կը հովանաւորէ սկաուտութիւնը և կը գուրգուրա՛լ

խակ անոր վրայ: Ահա՛ թէ ի՛նչ կ'ըսէր ն. վ. ճորճ Ե. առիթով մը.

«Շատ գոհ եմ տեսնելով սկառուական եղբայրակցութեան տարածուիլը՝ Մեծն Բրիտանիոյէն դուրս ալ:

Կը մազքեմ կարելի յաջողութիւն մը այն ջանքերուն մէջ՝ գորս սկառուիգմը ի գործ կը դնէ երիտասարդութեան զարգացման և համերաշխութեան համար և որ կը կազմէ ապագայի Միջագոյնին ամուրի ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԸ ԵՐԱՇԽԻՔԸ»:

Ահա՛ և Պելճիգայի Ալպէր թագաւորին կարծիքը՝ սկառուիգմի մասին.

«Այն եղբայրակցութեան ձեռնարկը գոր կը հետապնդին՝ երիտասարդութեան բարոյական և փիլիսոփայական զարգացման համար նուիրուողները, ԱՇԽԱՐՀԻ ԲՈՂՈՐ ՊԵՏԵՐԷՆ ՔԱՉԱՒԵՐՈՒՆԵՒՈՒ ԱՐՃԱՆԻ Է»:

Եւ ճիշդ այս ճշմարտութիւնները գիտնալու համար է որ օտար հեղինակաւոր ու բարձրատարիճան անձնատրութիւններ պատիւ կը համարին ու սպրտախրութիւն՝ օժանդակել, քաջութիւն ու հովանաւորել՝ այս կազմակերպութիւնը: Ամէն երկրի մէջ սկառուական կազմակերպութիւնները յայն օժանդակութիւն կը գաննեն բարձրատարիճան անձնատրութիւններէ ըլլան անոնք քաղաքական, գրական,

գիտութեան կամ հասարակական գործիչներ:

Անոնք բոլորը գիջած են այս փորձիկներու կազմակերպութեան օժանդակութիւնը և հովանաւորութիւնը ստանձնել, մինչդեռ, ո՛վ հեղինակ մեր մէջ նախակրթարանի մը հոգարարձուին խկ չի գիջիր այլ «համեմատութեան» . . . : Ատոր հակասակ, գիտէ՛ սակայն, ի հարկին, կի՛ց մըն ալ ի՛նք տալ արդէն սկար այլ կազմակերպութեան: Չհաւատացողներ կրնան Գահիրէի Գալուստեան վարժարանի հոգարարձութեան ասմարներէն հասկնալ. . . : Խեղճ ժողովուրդ ենք իսկապէս: Գաւարու գարմանայի կերպ մը գրոշմուած է մեր ուղեգններուն վրայ: «Ինչ որ ի՛մն չէ՛ լաւ չէ», և բնդհակասակը: Բայց այլ մասին՝ ուրիշ առիթով: Կր բաւականանք, սա այժմ, միայն մեր բնկերներուն և համակիրներուն ցոյց տալով գլխաւոր վէրքերը, թեյապրելով անոնց անմիջական գարմանին պէտքը, ու սպասելով քիչ մ'աւելի երանելի օրերու՝ երբ համբուրելի դարձնէ մեր Շաշանակիր վեհապանձ գրոշը:

Մենք կը սպասենք այլ օրին, այլ Մեծ Օրին:

ՍԿԱՌՈՒՏ

Գահիրէ



ԼԱՍ ՊԱՏԱՍՈՒՄՆ ՄԸ

Անտարբերը.— Ի՞նչ հանոյք կը ստանա այսպէս վագելէ և ցատկելէ:

Սկառուը.— Հանոյքը այն է որ քեզ նման փոր մը պիտի չունենամ:



ԲԱՆԴԱՐ

ԼՈՒԵՐԸ

«Անոնք կարգ ու կանոն չունին, կ'երթան կուզան ծառերու վրայ, խելքին փչածը կ'ընեն: Այս աստիճանի անհանգուրժելի են ճանդայի միւս բնակիչներուն հանդէպ, որ դարձած են մի արհամարհելի ցեղ, ազահութեան և գոգուութեան օրինակը: Այս, — կը կրկնէր Բալուն իմաստուն արջը, իր շուրջ խմբուած գայլիկներու վահմակին — չըլլայ թէ բանդար-լոգերին հետեւիք, թէ չէ. . . » և շնորհքով սպրտակ մը իջեցուց Մօզլին, որը, քիթը անկած, անուշադիր ծառերու գազաթը կը նայէր:

«Չար Բալու, դուն ես անխիբքը», կը մտածէր Մօզլին, երբ, քիչ մը վերջը, խոտերու մէջ կը թաւալուէր:

Այս անգամ, երբ կապիկները մօտեցան Մօզլին իրենց խոտամնայից խօսքերով նա չղիմաղբեց անոնց: «Չգէ, ձգէ սա քարոզիչ ծեր արջը — կ'ըսէին անոնք — ձգէ նրա բոլոր պարապ օրէնքները, ստրկութիւնը, եկ գէպի սպասութիւն, խաղ և անհոգութիւն, եկ Մօզլի դուն մեզ նման ես, եկ դուն մերոնցից ես»: «Ո՛ր երջանկութիւն, սա է կեանքը — կը մտածէր Մօզլին, երբ ինքն ալ ծառերու գազաթը կը մագլցէր կապիկներու ետեւէն — ստախօս Բալու, որ կը վարկարեկես այսքան սիրալիր էակներ»:

Բայց միամիտ Մօզլին շուտ պիտի յուսախաբուէր:

Կապիկները հէնց որ հասան ի-

րենց բնակած վայրը, աւերակ գիւղ մը, բանեցին Մօզլին և բանտարկեցին: Աւերակի մը փոսի մը մէջ ձգեցին նրան, ուրկէ մինակ դուրս գալը անկարելի էր: Խեղճ ազան խաւարին մէջ չուսով սովամահ կը լինէր և բանդար-լոգերը երջանկութիւնից երգում և պարում էին:

Լաւ որ գայլերու բարեկամ անգղբ Շիլ տեսած էր ամէն ինչ և շուտ մը թուա նրանց իմաց տուա: Խորամանկ Բալուն գլուխը սկսեց քերել, ինչ որ իր մօտ մեծ մասնոցութեան նշան մըն է, կապիկներին հետ գործ ունենալը լաւ բան չէ, գլուխին բաւական բնկոյղ ստացած էր երբ անոնց կը սպաննար, ո՛վ պիտի անոնց հետեւէն վագէ ծառերու գազաթը: Ո՞վ. . . Կառ՞ն: Եւ արջը գնաց հակայ օձը գտաւ, ան որ իր ճաշին մի կըսով չի բաւականանար:

«Կա՛ա՛, կանչեց Բալուն և սկսեց օձը զայրացնել, Կա՛ա՛, գիտես թէ քեզ ինչպէս կը կանչեն Բանդար-Լոգերը, ճիճու, կ'ըսեն քեզ, ճիճու, անդամալոյժ ճիճու»: Բաւական է այսինչպէս գիտէք, օձ մը պար անցնելու համար: Անշուշտ, լսած էք թէ օձ մը որքա՞ն ինքնահաւան է: Բալուն այն ժամանակ բացատրեց իրենց պատիկ բարեկամի վիճակը և Կա՛ա՛ի գայլ-րոյթը շատացաւ, Կա՛ա՛ն թէ ես ոտք չունէր, լաւ սիրտ մը ունէր և շատ կը սիրէր «գորտուկը»:

Օձը իր հակայական մարմնով

սլացաւ դէպի աւերակները եւ աշխարհի ուժով զարկաւ շէնքին, որ պատր վուլ եկաւ եւ Մօկլին ծակէն դուրս պրծնելով վախաւ:

Բայց ինչո՞ւ բոլոր կապիկները ստատած կեցած են: Ս...Ս...Ս... կ'ընէ կա՛տն յաւ ճաշ մը պիտի ընեմ: Կարծեմ ամենքիդ յայտնի է թէ օձ մը շատ կը սիրէ կապիկին միտը:

Կա՛տն կշտացաւ, վախէն բաւական ժամանակ կապիկները չը համարձակեցան Բալուի գլուխին ընկոյզներ նետել, իսկ կրնաք



վստահ ըլլալ, որ Մօկլին ալ Բանդար-Լոզերին չհեռուեց:

ԱՔԵԼԱ


ները դարձանել կը ջանան ասիկա ու կը դատարարակեն իրենց ծնողքը... Մեր արշաւանքները կը կատարուին թաւուտ անտառներու, զեղատեսիլ ծովախորշերու կամ դանազան վայրերու մէջ. հոն կրտապուենք սկառուտական շարժման յայտագիրը, բազմազան կրթութիւն ու դատարարակիչ նիւթերը, զոր կը շարժանկարենք Մինէ Հայ Արիով ու կը հրամցենք սկառուտներու ծնողքներուն, որոնք հետաքրքիր ու ուրախ կերպով այժմ մեզ կը քաջաւերեն որ շարժման նեցուկ կը հանդիսանան: Ահա պարագայ մը որ դժուար է սահայն, Հայ Արին կ'աշխատէ իրականացնելու:

Կը սպասեմ operateur ին նոր տեղեկութիւններուն որոնք պիտի գրեմ դարձեալ:

ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԱՌԹԻԻ

Նոր Տարուայ ամթիւ Հայ Արիները ստացած են շնորհաւորական նամակներ, հետեւեալ անձնաւորութիւններէն և Միութիւններէն. —

Լորտ և Լէյտի Պէյտըն Բաուլ, Հիւսուպըրթ Մարթին, գնդապետ Հալլ, Էրնէսթ Սքոթ, Աւստրիացի, Ճաբոն, Հունգարացի, Ռուսի, Սերպ, Լեհ և այլն սկառուտական Միութիւններէն:



Հայ Արիներու Մարտէլի Ա. խումբը իր աշխատանքները արդէն դրած է որոշ ու յստակ ճամբու մը վրայ ու յարատեւօրէն կը շարունակէ աշխատիլ ու թարմանալ իր սիրելի «Միշտ Պատրաստ» շունչին սակ:

Ciné Հայ Արի որ խումբ մը սկառուտներու անհատական միջոցներով ստեղծուեցաւ PATHE BABY ի գործիք մ'է: Մեր դասախօսութիւններն ու հաւաքօթները կը վերջանան բարոյական խաղացանկերէ, որոնք շինիչ ազդեցութիւն կը ձգեն կայտառ սկառուտներուն վրայ:

Սինէ Հայ Արի ի ստեղծման շարժառիթը սակայն ուրիշ է, որը կ'ուզեմ տեղեկացնել «Հայ Արի» ի սիրելի ընթերցողներուն:

Մեր դժբախտ ու այլամերժ պայմաններուն սակ հայ ծնողը չէ կրցած ըմբռնել սկառուտական շարժման կարելութիւնը և կը կարծէ թէ անոր յայտագիրը կը բազմապիսի գիւտարական մարդանքներէ, ճամպագութեանէ կամ լեռներ մազլցելու պարագայ յոգնութենէ, որը սխալ կարծիք է, ու ասոր անաչքը աննելու համար այժմ գաւակ-

ԽՈՒՄԲԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Առաջնորդական Խորհուրդը

Ի՞նչ է ԽՈՒՄԲԵՐՈՒՆ ԳԻՐ

Առաջնորդական Խորհուրդը սկառուտական խումբի ամենակարեւոր օրկաններէն մէկն է: Խորհուրդին մաս կը կազմեն խումբի բոլոր առաջնորդները, ինչպէս նաեւ խմբապետը իր օգնականներով: Խորհուրդին կրնան նոյնպէս մասնակցել խումբի այն անդամները, որոնց ներկայութիւնը օգտակար կը նկատուի: Անշուշտ վերջինները ընտրուած սկառուտներ պէտք է ըլլան: Ընդհանրապէս խմբապետն է որ կը նախագահէ Խորհուրդին: Իր բացակայութեան ժամանակ, իր օգնականներէն մէկը յանձն կ'առնէ Խորհուրդին նախագահութիւնը:

Առաջնորդական Խորհուրդը երկու տեսակ գործունէութիւն ունի:

1. Խումբի վարչական գործունէութիւն.

2. Խումբի դատական գործունէութիւն:

Խորհուրդն է որ կ'որոշէ, կը կազմակերպէ ու կը գործադրէ խումբի ներքին սկառուտական յայտագիրը: Ընդհանրապէս խմբապետն է, որ Խորհուրդին կը ներկայացնէ եռամսեայ կամ վեցամսեայ յայտագիր մը, բայց երբեմն առաջնորդներն ալ կը բերեն իրենց առաջարկները և այդպիսով կորոշուի խումբի ներքին գործունէութիւնը ժամանակի մը համար: Անգամ մը որ խումբի գործունէութիւնը որոշուեցաւ, Խորհուրդը կը բաժնէ բոլոր պէտք եղած աշխատանքները և կը գործադրէ դանտը:

ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Առաջին իսկ նիստին, Խորհուրդը կը հաստատէ իր ներքին կանոնները: Կ'ընտրէ քարտուղար մը, որուն պաշտօնն

է արձանագրել նիստի ընթացքին կայացած բոլոր որոշումները և մանրամասն տեղեկագիր մը պատրաստել: Քարտուղարը յաջորդ նիստին կը ներկայացնէ իր պատրաստած տեղեկագիրը, որ կը վաւերացուի ժողովին կողմէ: Նոյնպէս քարտուղարն է, որ կը գրադուի խումբի ներքին թղթակցութեամբ: Խորհուրդը կ'ուսենայ գանձապետ մը, որ կը պահէ խումբի բոլոր հաշիւները և երեք ամիսը անգամ մը նիւթական տեղեկագիր կը զրկէ Միութեան Գործադիր Խորհուրդին: Խորհուրդը կրնայ նոյնպէս իր անդամներու մէջէն գոյքապահ մը ընտրել, որ կը հսկէ խումբի բոլոր գոյքերուն:

Երբ խումբ մը գրադարան ունի, անձ մըն ալ այդ գործով կը գրադուի: Առհասարակ պաշտօն ունեցող մը պէտք է որ տետրակ մը պահէ, որուն մէջ արձանագրուած կ'ըլլան բոլոր պէտք եղած տեղեկութիւնները և ամէն ամիս պարտաւոր է Խորհուրդին զեկուցանել իր գործունէութեան մասին:

ԽՈՐՀՈՒՐԴԸ ԻՆՉՊԵՍ ԿԸ ԳՈՐԾԷ

Ընդհանրապէս Խորհուրդը կը հաւաքուի որոշ օր մը շաբթուայ ընթացքին: Օրինակ, ամսուայ վերջի նիստին Խորհուրդը մանրամասնօրէն կը պարզէ իր խումբի գործունէութիւնը յաջորդ ամսուան համար (հաւաքումներ, արշաւներ, պատյաներ, բանակումներ, հանդէսներ, այցելութիւններ և այլն):

Իսկ երբ ամիսը լրանայ, ամէն առաջնորդ Խորհուրդին կը ներկայացնէ իր խմբակի տետրակը, ամսական տեղեկագիր և սկառուտներու անգամաւճարները:

Խմբակային տետրակը փոքրիկ զըրքոյկ մըն է, որ առաջնորդը միշտ իր մօտ կ'ունենայ: Այդ զըրքոյկին մէջ ար-

ճանապարհում կ'ըլլայ խմբակի անդամներու ցանկը (անուն, մականուն, ծրնայեան թուակ, հասցէ, պաշտօն, տաճար, անցուցած քննութիւնները և այլն), ինչպէս նաև սկսուածներու ներկայութիւնը, վարքը և անձնական յատկութիւնները: Տեղաբնակի մէջ արձանագրուած կ'ըլլան խմբակի հաշիւները, խմբակային հաւաքովիներու և արշաւներու մասին ամփոփ տեղեկութիւնները, նաև թէ ինչպէս բաժնուած են խմբակի գոյքերը և սրտնք

ները իրենց գեղեցիկ և յաջող գործունէութեան համար:

Գարով խմբակային տեղեկագրին, ան կը պարունակէ նոյն մանրամասնութիւնները ինչ որ խմբակային տեղաբնակը սա տարրերութեամբ միայն, որ տեղեկագիրը գրուած կ'ըլլայ մասնաւոր թուղթի վրայ և առաջնորդը, գալի ներկայացնելով խմբակեան, ալիս սով տեղեկ կը պահէ Սորհուրդի միւս անդամներն ալ, թէ իր խմբակը ինչպէս կատարած է իր վրայ գրուած



ՀԱՇԻ ԺԱՄԸ ԱՌԱՋՆՈՐԳԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՄԸ ԸՆԹԱՅԻՆ

են պատասխանատու անձերը: Սկսուածական պահերն ընէր գառ, տետրակը կրնայ պարունակել խմբակի թօթեմը, իր երգերն ու պարերը, ինչպէս նաև իր ստրված կամ խմբակի կողմէ հնարուած խաղերը: Վերջին էջերուն մէջ, մասնաւոր տեղ մը կը յատկացուի խմբակեան գիտողութիւններու համար, ուր խումբի վարիչը կը գրէ թէ խմբակը ինչպէս կատարած է իր աշխատանքը ամսուան ընթացքին: Եթէ հարկ կայ կը ցուցնէ առաջնորդին սրտնք են խմբակի տկար կողմերը և նոյն ատեն կուտայ պէտք եղած հրահանգները գանտնք դարձաներու համար, կամ եթէ գործերը լաւ կ'երթան կը շնորհաւորէ խմբակի բոլոր անդամ-

պարտականութիւնը: Երբեմն խմբակային տեղեկագիրը մրցակցութեան կ'ենթարկուի:

Երբ խմբակի մը համար իրապէս գծուար կուգայ իր վրայ գրուած պարտականութիւնները կատարել, ասիկա կ'ապացուցանէ որ յայտագիրը որոշելէ առաջ, Առաջնորդական Սորհուրդը միշտ հաշի պիտի տան խմբակներու ուժը: Ընդհանրապէս տարուայ սկզբի յայտագիրները շատ թեթեւ կ'ըլլան և հեղհեղ քանի սկսուածները աւելի կը զարգանան, խումբի գործունէութիւնն ալ կը զօրանայ:

Քանի մը խօսք ալ Սորհուրդի բարոյական ազդեցութեան մասին, որ նոյնքան կարեւոր է եթէ ոչ աւելի:

նոյնքան, եթէ ոչ աւելի, կարեւոր է: Նկատի առնելով, որ խումբի Առաջնորդական Սորհուրդը տեսակ մը սղարակոյտ կը կազմէ (Etat-Major), անհրաժեշտ է որ անոր հեղինակութիւնը բարձր ըլլայ: Ուստի ամէն աստիճանաւոր պէտք է լաւ հասկնայ, թէ ինչ ծանր պարտականութիւն ունի իր վրայ: Միշտ լաւագոյն օրինակը պէտք է ապա միւսներուն և ցուցնէ անոնց, թէ որն է շիտակ ճամբան:

Պատուոյ Ատենը կը գումարուի այն պարագային միայն երբ խումբի անդամ մը կը խախտէ սկսուածական դաւանանքը:

Լաւ խումբի մը մէջ, Պատուոյ Ատենը պէտք է որ յաճախ գումարուի:

Պատուոյ Ատենը իրաւունք ունի յանցաւորին կախակայելու և նոյնիպէ պայն արտաքսելու սկսուածական խումբէն:



ԱՌԱՋՆՈՐԳՆԵՐԸ ՀԱՄԵՐԱՇԽ ԵՆ
ԵՆ ԽՄԲԱԿՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԵՐԸ
ՅԵՏՈՅ ԿԸ ՊՏՏԻՆ
(Նկարները Փարիզի վագրերէն)

Չմտնանք որ մեր Միութեան մէջ առաջնորդները երբեք քննադատութեան տարիկայ չպիտի ըլլան միւսներուն առջև և ասիկա չի ալ պատահիր եթէ ամէն աստիճանաւոր զիտակից կերպով աշխատէ և իր բարոյական յատկութիւնները իրապէս մշակէ:

ՊԱՏՈՒՈՅ ԱՏԵԱՆ

Առաջնորդական Սորհուրդը Պատուոյ Ատենին կը փոխուի, երբ խումբի անդամ մը պիտի դատուի: Այդ աստիճան Սորհուրդի կազմը կրնայ փոխուիլ: Պատուոյ Ատենին մաս կը կազմեն խմբակեանը, փոխ-խմբակեանը, քննիչը, աւագ-առաջնորդները և եթէ պէտք է քանի մը առաջնորդներ մասնաւորապէս ընտրուած:

Երբ աստիճանաւոր մը պիտի դատուի, բոլոր այն անդամները, որոնց աստիճանը մեղադրեալին աւելի ցած է, պարտաւոր է ժողովէն հեռանալ:

ԱՌԱՋՆՈՐԳԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Տարուայ ընթացքին, Առաջնորդական Սորհուրդը կուենայ նաև իր բանակումը: Այդ բանակումներու նպատակն է ցուցնել խումբի աստիճանաւորներուն, թէ ինչպէս պէտք է զիտակաբար խմբակ մը և միւսներն ատեն զօրացնել անոնց թէքնիքը: Շատ անգամ առաջնորդները, ալիս աստիճան կը հանեն իրենց երիզները և կը կազմեն խմբակ մը սրուն առաջնորդը կ'ըլլայ խմբակեանը:

Այս նոր կազմուած խմբակը կուենայ իր թոթեմը, իր երգը, իր պարը: Կուենայ նաև զօրաւոր յայտագիր մը: Բանակումի ընթացքին տեղի կուենան խաղեր, մրցումներ և դատախօսութիւններ, ուր խմբակեանը աստիճան կուենայ իր առաջնորդներուն սկսուածական գործը աւելի բարձր տեսակէտներէն բացատրելու:

* * *

Հիմա կը գլանք, թէ ս'ըքան կարևոր է խումբի մը համար կազմակերպուած Առաջնորդական Խորհուրդ մը ունենալ:

Անդամներու գործունէութիւնը ոչ միայն խումբի վիճակը կը բարեփոխէ,

այլ, ինչ որ աւելի կարևոր է, կը տեղծէ այս 14-16 տարեկան պատանիներու մէջ պատասխանատուութեան բարձր հոգեբանութիւն մը, որ այնքան անհրաժեշտ է ազգայն վստահելի պետեր ունենալու համար:

Ա.Ր. ԶԱՄԱԼԵԱՆ

ԳՆԻՆՁԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ամէն սկստա պէտք է ունենայ իր գաւազանը: Ան մաս կը կազմէ սկստապահան համազգեստին և առանց գաւազանի չենք դիտել թէ ինչպէս կարելի է մէկը սկստա նկատել:

Սկստապահան գաւազանը պէտք է ըլլայ մէկ մէթը վաթսուս ամ. բարձրութեամբ մեծ աղոց համար (12-14 տարեկան): Ամէն սկստա գաւազանին վրայ կ'արձանագրէ իր անունը և կը բաժնէ դայն մէթրական զրութեամբ, այդպէսով 1) իր գաւազանը չկորսուի, 2) կը ծառայէ միշտ չափելու ամէն տեսակ բաներ:

Սկստաը պէտք է սիրէ իր գաւազանը, այդ պատճառաւ պէտք է որ գաւազանը ըլլայ «համակրելի», այսինքն ոչ շատ հաստ և շատ երկար, պղտիկ սկստապահ համար, այլ 1 մէթը 40սմ. որ սկստաը բռնէ և գործածէ հաճոյքով (կը ճանչնամ սկստաաններ, որոնք չեն սիրել իրենց գաւազանը պարզ այն պատճառաւ որ շատ անգամներ ծիծաղելի կամ վտանգաւոր եղած են անոյ մէքրոններու կամ քրամվէյններու մէջ:


Ուրեմն եթէ խմբապետը յարմար գաւազաններ տայ աղոց վստահ եմ թէ ազգքը դայն պիտի սիրեն:

Կարելի է կազմակերպել նաև խմբակային մրցումներ գաւազան գարգարելու համար, նկատուած է որ այս ալ լաւ արդիւնքներ կուտայ, մանաւանդ եթէ մրցումը շատ երկար չտևեր:

Գաւազանը ունի բիւրաւոր օգտակարութիւններ: Անոյ սկստաը կրնայ չափել, վրան յենիլ երբ յոյնած է, պատգարակ և վրան շինել, սանդուխ շինել, խողերու ժամանակ գործածել, ինքզինքը պաշտպանել, և վերջապէս ուրիշ գանազան օգտակարութիւններ, որոնք սկստաանները աւելի լաւ գիտեն:

Ուրեմն սկստաանները պէտք է գաւազանը տունը մտնան, կամ տունը թողուն այլ միշտ իրենց հետ ունենան դայն, իբր լաւապէս ընկեր և օգնական: Պէտք է ջանան նոյնպէս որ իրենց գաւազանը ըլլայ յարմար, չափաւոր, և մասնաւորապէս «համակրելի և սիրուն»:

ՍՈՒՐԻՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ



Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ե Ա Ն Ք Ը

ԴԵԿՏ. 13 Ի ԵՐԵՎԱՆԻ

Հայ Արիներու 5րդ տարեկան երկույթը տեղի ունեցաւ շաբաթ 13 Դեկտեմբերին, երեկոյեան ժամը 8:30 ին Սալ Ենայի մէջ: Ընդարձակ սրահը լեցուն էր մեր բարեկամներով, ներկայ էին նաև օտար սկստապահան կազմակերպութիւններ:

Ժամը 8:45 ին սրահ մասն օրուան նախագահ պ. Հանրի Մարթի, Միութեան Հով. Մարմնի նախագահ պ. Ա. Խատիսեան, Մարք Սանիկէն և ընդ. պետը Գ. Մեծատուրեան և սղջաւանցան շրջանի խմբապետներուն կողմէ:

Հանդէսը սկսաւ սկստապահան մարտով, շրջանի 12 խմբային գրոշակներու առջևէն տողանցք կատարելին սկստաանները, և գալլիկները:

Յետոյ գալլիկները ներկայացուցին իրենց յայտագիրը, որն էր, Ա. «Բարի գարձը» և երկրորդ Փրանսերէն երգախառն ներկայացում մը:

Յետոյ խօսեցաւ պ. Ա. Խատիսեան, որ բարի գալուստ-մաղթելէ յետոյ մեր օրուայ օտար հիւրերուն, ժողովուրդին անգամ մը ևս պարզեց մեր Միութեան նպատակը, և ըսաւ. բոլոր ճիւղերը կ'ըլլան մեր աղոց կողմէ, մեզի կը մնայ քաջաբերել զիրենք մեր անվերապահ համակրութեամբ: Ստեղծուած կազմակերպութիւնը պատիւ մըն է

հայ երիտասարդութեան, ջանանք որ նա աւելի զարգանայ:

Յետոյ Փարիզի «Վազրերը» տուն մեծ բարեբերութիւններ և բանակումի կրակի երգեր: Բոլորն ալ խիստ յաջող և ժողովուրդը շատ գոհ մնաց:

Յետոյ խօսք տուաւ պ. Մարք Սանիկէն և անգամ մըն ալ շեշտեց թէ սրբան սերտ կապերով բարեկամացած է իր սիրելի Գուրգէնին հետ և յետոյ գաւառով ժողովուրդին ըսաւ. «Կը սիրենք այս ազգքը սրովհետև սկստաաններ են, սկստաաններ բառին բովանդակ իմաստով, ազգք սրոնք այնքան գնահատելի աշխատանք մը յանձն առած են հայ նոր սերունդ մը կրթել: Իսկ աւելի կը սիրենք ձեզ սրովհետև հայ սկստաաններ էք»: Եւ Մարք Սանիկէն, «Փրանսացի առաջին հետարը», ինչպէս կըրտէ Պրիան, խօսեցաւ իր ամենազեղչիկ հայասիրական ճատերէն մին:

Միջնաբարէն առաջ երէցները մեծ կազմով ներկայացուցին «Պաշտօնս խումբայ է», սրը նոյնպէս մեծ յաջողութիւն գտաւ:

Երկրորդ մասի սկիզբին պ. Արշակ Զամարեան ժողովուրդին պարզեց մեր Միութեան մէկ նոր գործը, «Հայ Արիներու Բարեկամներու Միութեան» կազմութիւնը, որուն նպատակը պիտի ըլլայ օժանդակել մեր Միութեան: Պ. Զամարեան յետոյ զեկախարհեց Ետ-

զոյն Դրօշակի մը աճուրդը, որմէ զոյացաւ 1100 Փրանք շնորհիւ իր մեծ ջանքերուն: Կ'արժէ մասնաւոր շնորհակալութիւններ յայտնել իրեն և նոյնպէս Հայ Արիներու երկու բարեկամներուն, Պ. ՍԱՀԱԿ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ և Պ. ՏԻԼՍԻՋԵԱՆԻ, որոնք ամենամեծ մասնակցութիւնը ունեցան:

Երկրորդ մասին Փարիզի Ա. խումբը ներկայացուց կենդանի պատկերներ. առաջինը ակտորան մըն էր հայ զինուորական կեանքին, իսկ երկրորդը «ուղեորութիւն մը դէպի լուսին»:

Յետոյ խօսեցաւ պ. Հանրի Մարթի որ Սկաուտական Միջազգային Կոմիտէին կողմէ շնորհաւորեց Հայ Արիներու կազմակերպութիւնը, և անդամ մըն ալ շեշտեց իր վստահութիւնը մեր Միութեան հանդէպ:

Իրեն պատասխանեց ընդհ. պետը, յետոյ կարդացուցաւ Միջազգային Կոմիտէի կողմէ զրկուած հետազերը, որը հետեւեալն էր. «Ձերմագին շնորհաւորութիւններ և յաջողութեան մաղթանքներ»:

Ընդհ. պետը պզ. Մարք Սանիէի և Ա. Սաախեանի յանձնեց շնորհակալութեան սկիւղ նշանակը:

Հանդէսը վերջանալէ առաջ ներկայացուցաւ Անաթօլ Փրանսի մէկ կատակերգութիւնը և ժողովուրդը ցրուցաւ զո՛հ ապաւորութեամբ:

Հանդէսին ներկաներուն մէջ կը նշմարուէին վաճառապուհ եպիսկոպոս Քիպարեան, կոմս Մարքի, Մարք Սանիէ, Ա. Խատիսեան, Ս. վրացեան, Տէր և Տիկ. Զամալեան, Գիւլխանգանեան, Սասունի, Միժատուրեան, Աւետիք Խաչակեան, պ. Գերասիմ Բալայեան, Տէր և Տիկ. Տօքթ. Տէր-Գաւրեան, Պողոսեան, Տիկին Շանք, Հայկ Արամ Քիպարեան, Տիգրան Բէկգատեան, Ալբունեան, Գարակէօգեան, Ռէն, Տիկին Կորկանեան, Սանիէ ընտանիք, Տէր և Տիկ. Սեդրակ Սասունի, պ. Շատանեան, բոլոր սկաուտ ծնողները, հայ գաւազան կազմակերպութեանց անդամներ և մեծ քիւով բարեկամներ:

ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

Սկաուտական Միջազգային Կեդրոնական Կոմիտէն իր անցեալ տարուայ նիստին մէջ փափազ յայտնած էր որ աշխարհիւ չորս կողմ ցրուած հայ սկաուտները հաւաքուին մէկ դրօշի տակ և Փ. Հայ Արիներու յանձնած էր այս մասին կարեւոր պարտականութիւն մը վարելու համար ընդհանուր կազմակերպութիւնը:

Դեկտեմբեր ամսու ընթացքին արդէն մեր մեծ ընտանիքի մէջ մասն ևրկու կազմակերպութիւններ:

Պ Ո Ի Ք Ր Է Շ

Ռումանիոյ մեր սկաուտ կղերայրները առին առաջին քայլը, և նախաձեռնութեամբ Յ. Միրիճանեանի կողմուած է արդէն Պուրէշի մեր Ա. Մասնաճիւղը, Յ. Միրիճանեան շրջանային խմբապետ նշանակուած ըլլալով պիտի կազմէ նաեւ ուրիշ Մասնաճիւղեր Ռումանիոյ մէջ:

Պ Է Յ Ր Ո Ի Թ

Պէյրութի մէջ ալ կազմուած է երկնց սկաուտներու խումբ մը: Ընդհանուր Պետը խմբապետ նշանակած է Կոր. Պիմէն Հընտամեանը որ արդէն ձեռնարկած է կազմակերպական աշխատանքի:

Մանրամասնութիւնները «Հայ Արի»ի յառաջիկայ թուով:



« Հ Ա Յ Ա Ր Ի » Ն Կ Ը Ծ Ա Խ Ո Ւ Ի

ՓԱՐԻՋ, ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ Գրատունը (51, Rue Monsieur le Prince Paris 6)
 Հ. ԴԵՐՁԱԿԵԱՆԻ մօտ (7, Rue de Tournon, Paris 6).
 Հայոց Եկեղեցին (15, Rue Jean-Goujon).

ԼԻՈՆ, ՍՏԵՓԱՆ ՊՕԴՈՍԵԱՆԻ մօտ, 64, Rue Bonnel.

ՎԱԼԱՆՍ, ՊԱՐՈՅՐ ՊԱԵԱՆԻ մօտ, 14, Rue Bouffier.

ՄԱՐՍԷՅԸ, ՆՈՒՐՀԱՆ ԳԱՎԷՋԵԱՆԻ մօտ, 25, Avenue du Château, La Valbarelle

ՊՈՒՔՐԷՇ, Յ. ՄԻՐԻՃԱՆԵԱՆԻ մօտ, Mossilov 329, Bucarest.

ՊԷՅՐՈՒԹ, ԱՊԱՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ

ԳԱՀԻՐԷ, ՀԱՅԿ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ ՄՕՏ:

ՆԻՒ-ԵՕՐՔ, Պ. ԱԲԻՍՈՂՈՄԵԱՆԻ մօտ, 99, Lixington Ave. New-York City.

ՆԻՔԵՐՈՒ ԱՌԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԱԻ ՄՈՒԵՐԱԳՈՆ ԳԱՅԸ ԻՆ «ՍԱՐԵՐՈՒ ՈԳԻՆ» ՊԱՏՄՈՒԱԿԻՆ ԵՄԸՆԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԵՐՁԸ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԹԻՈՎ ՊԻՏԻ ՏԱՆՔ:

— ПРЕССА —
Յանվարի 19 20.779.

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

ՍԿԱՌԻՏԻՆ ՈՒՂԵՑՈՅՑԸ

64 էջ, պատկերազարդ, հրատարակութիւն Ֆ. Հ. Ս. Միութեան

Գին 5 ֆրանք.

Դիմել «Հայ Արի» Ի

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ

ՖՐ. ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ

Բ . Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն 1930

Գին 1 ֆրանք

Դիմել «Հայ Արի» Ի

Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ե Լ Ա Ի

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՍԿԱՌԻՏԻՆ ՈՒՂԵՑՈՅՑ»ԻՆ

Կը պարունակէ գործնական փոփոխութիւններ

հաստատուած Բրիվայի Համաժողովին:

Գին 1 ֆրանք

Դիմել «Հայ Արի»ի գործակալներուն

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

ՍԿԱՌԻՏԻՆ ՈՒՂԵՑՈՅՑԸ

64 էջ, պատկերազարդ, հրատարակութիւն Ֆ. Հ. Ս. Միութեան

Գին 5 ֆրանք.

Դիմել « Հայ Արի » Ի

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ

ՖՐ. ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ

Ա. Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն 1928

Գին 1 ֆրանք

Դիմել « Հայ Արի » Ի